

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արդարադատության ակադեմիա»

պետական ոչ առևտրային կազմակերպության
2017 թվականի գործունեության վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
II. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ.....	5
1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում.....	5
2. Մասնագիտական պատրաստում.....	7
III. ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ.....	9
1. Վերապատրաստում.....	9
2. Մասնագիտական պատրաստում.....	12
3. Հատուկ ուսուցում.....	13
IV. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ.....	15
1. Մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրերի նախագծերի մշակում.....	15
2. Առարկայական ծրագրերի մշակում.....	16
3. Մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակում.....	20
4. Աշխատաժողովների, հրավիրյալ մասնագետների դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում.....	21
5. Ընթացիկ այլ աշխատանքներ.....	25
V. ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ.....	27
1. Ընդհանուր տեղեկություններ.....	27
2. Հեռուսուցման դասընթացներ.....	28
3. Ընդհանրացված ամփոփում.....	31
VI. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....	32
1. Եկամուտներ.....	33
2. Ծախսեր.....	34
VII. ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ.....	36

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ դատական օրենսգրքով, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) կանոնադրությամբ, Ակադեմիայի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշումներով և այլ իրավական ակտերով, Ակադեմիան հաշվետու ժամանակահատվածում իր գործունեության նպատակների ու խնդիրների կենսագործման ուղղությամբ՝

- 1) կազմակերպել և անցկացրել է որակավորման ստուգման արդյունքներով դատավորների, դատախազների և ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
- 2) կազմակերպել և անցկացրել է դատավորների, դատախազների, ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների, Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում.
- 3) կազմակերպել և անցկացրել է դատական ծառայողների, ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների, ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստում.
- 4) կազմակերպել է դատավորների, դատախազների, քննիչների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցում՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով.
- 5) կնքել է պայմանագրեր և արդյունավետորեն համագործակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց, միջազգային կազմակերպությունների հետ.

6) մշակել է ուսումնամեթոդական նյութեր՝ Օրենքով նախատեսված կրթական ծրագրերի իրականացման համար:

2017 թվականի ընթացքում գործունեության տարբեր բնագավառներում իրականացված բազմաթիվ միջոցառումներն ու ծրագրերը կոչված են եղել խթանելու Ակադեմիայի առաջընթացը, ապահովելու ուսումնական գործընթացի բարելավումն ու զարգացումը և կրթության որակի բարձրացումը:

Քայլեր են ձեռնարկվել նաև ժամանակակից նոր սարքավորումներ ձեռք բերելու, նյութատեխնիկական բազան, ենթակառուցվածքները բարելավելու, ինչպես նաև հասարակության հետ կապերը զարգացնելու, Ակադեմիայի վարկանիշն ու հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ: Կատարվել են նաև բարեկարգման ու վերանորոգման ծավալուն աշխատանքներ և այլն:

Ստորև հանգամանորեն ներկայացվում է Ակադեմիայի 2017 թվականի գործունեությունը՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների և ոլորտների:

II. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- 1) դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստում.
- 2) դատավորների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
- 3) դատական ծառայողների և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստում.
- 4) դատական կարգադրիչների վերապատրաստում.
- 5) դատական կարգադրիչների հատուկ ուսուցում.
- 6) դատավորների հատուկ ուսուցում:

1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում

• **Դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում:** Խորհրդի 2017 թվականի հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/17/3 որոշմամբ հաստատված «Դատավորների և Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում՝ 2 հատվածով, 12 խմբով: Խմբերում ընդգրկվել է 13-34 դատավոր: Ծրագիրն իրականացվել է ուսուցման առկա և հեռավար ձևերով: Հարակից մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկված դասընթացները կազմակերպվել են ուսուցման հեռավար, իսկ ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկվածները՝ առկա ուսուցման ձևով:

Ընդհանուր մասնագիտական առարկաներով դատավորների երկու խումբ մասնակցել է վերապատրաստման դասընթացներին ապրիլի 25-ից մայիսի 05-ը: Հատուկ մասնագիտական առարկաներով վերապատրաստումն իրականացվել է հոկտեմբերի 16-ից դեկտեմբերի 15-ը:

Հայրով ներկայացվել է ընդամենը 255 ունկնդիր: Նրանցից վերապատրաստում են անցել 245-ը, որոնցից 223-ը՝ ՀՀ, 21-ը՝ ԼՂՀ դատավորներ և 1-ը՝ Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձ:

• **Դատավորների հատուկ ուսուցում:** Խորհրդի 2017 թվականի հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/17/3 որոշմամբ հաստատված «Դատավորների հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա սեպտեմբերի 9-ին, մեկ խմբով, իրականացվել է դատավորների հատուկ ուսուցում: Դասընթացների տևողությունը կազմել է 6 ակադեմիական ժամ:

Հայրով ներկայացվել է 35 դատավոր, որոնցից հարուկ ուսուցմանը մասնակցել են 20-ը:

• **Դատական ծառայողների և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստում:** Խորհրդի 2017 թվականի հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/17/3 որոշմամբ հաստատված «Դատական ծառայողների վերապատրաստման ուսուցման ծրագրի» և «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի միջև 25.05.2017թ. կնքված պայմանագրի հիման վրա իրականացվել է դատական ծառայողների վերապատրաստում՝ 13 խմբով: Խմբերում ընդգրկվել է 4-39 դատական ծառայող: Վերապատրաստումն իրականացվել է 2 հատվածով՝ 1) փետրվարի 27-ից ապրիլի 06-ը և 2) հոկտեմբերի 09-ից 18-ը:

Ծրագիրն իրականացվել է առկա ուսուցման ձևով: Ունկնդիրները դասընթացի ավարտին հանձնել են քննություն:

Դատական ծառայողների ուսումնառության տևողությունը՝ իրավաբանական մասնագիտական գործառույթներ իրականացնող դատական ծառայողների համար կազմել է 30, ղեկավար պաշտոն զբաղեցնող դատական ծառայողների համար՝ 26, ուսուցման ծրագրի 6-8 կետերում նշված մասնագիտական գործառույթ իրականացնող դատական

ծառայողների համար՝ 16, դատական նիստերի քարտուղարների համար՝ 12 և Դատական դեպարտամենտի այլ մասնագիտական գործառույթներ իրականացնող դատական ծառայողների համար՝ 6, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար՝ 30 ակադեմիական ժամ:

Հայրով ներկայացվել է 196 դատական ծառայող, որից 14-ը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք:

Վերապատրաստում է անցել 181 դատական ծառայող, որից 12-ը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձինք:

• **Դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում:** Խորհրդի 2017 թվականի հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/17/3 որոշմամբ հաստատված «Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում՝ 30 ակադեմիական ժամ տևողությամբ, որից 20-ը կազմել է վերապատրաստման, իսկ 10-ը՝ հատուկ ուսուցման դասընթացների ժամաքանակը: Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացները կայացել են մայիսի 15-ից հուլիսի 13-ը: Դասընթացները կազմակերպվել են 9 խմբով, յուրաքանչյուրում՝ 21-25 դատական կարգադրիչներ: Ունկնդիրները դասընթացի ավարտին հանձնել են քննություն:

Հայրով ներկայացվել է 243 դատական կարգադրիչ, որից 11-ը՝ ԼՂՀ-ից:

Վերապատրաստում է անցել 222 դատական կարգադրիչ, որից 11-ը՝ ԼՂՀ-ից:

2. Մասնագիտական պատրաստում

• Խորհրդի 2017 թվականի հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/17/3 որոշմամբ հաստատված «Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրով» մասնագիտական պատրաստում է անցել դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 19 անձ, (այդ թվում, 3-ը՝

ԼՂՀ-ից), որոնցից 9-ը՝ քաղաքացիական (այդ թվում, 1-ը՝ ԼՂՀ-ից), 4-ը՝ վարչական (այդ թվում, 1-ը՝ ԼՂՀ-ից) և 6-ը՝ քրեական մասնագիտացմամբ (այդ թվում, 1-ը՝ ԼՂՀ-ից):

Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցումը սկսվել է 2017 թվականի փետրվարի 27-ից և ավարտվել նույն տարվա հոկտեմբերի 13-ին: Ուսումնառությունն անցկացվել է ուսուցման 4 հատվածով:

– **Քաղաքացիական մասնագիտացմամբ** ունկնդիրների ուսումնառության ժամկետի տևողությունը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 1044 ակադեմիական ժամ, որից 280-ը կազմել է դասընթացների, 24-ը՝ քննաշրջանի, 720-ը՝ փորձաշրջանի, 20-ը՝ հրավիրյալ մասնագետների դասախոսությունների ժամաքանակը:

– **Վարչական մասնագիտացմամբ** ունկնդիրների ուսումնառության ժամկետի տևողությունը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 982 ակադեմիական ժամ, որից 220-ը կազմել է դասընթացների, 22-ը՝ քննաշրջանի, 720-ը՝ փորձաշրջանի, 20-ը՝ հրավիրյալ մասնագետների դասախոսությունների ժամաքանակը:

– **Քրեական մասնագիտացմամբ** ունկնդիրների ուսումնառության ժամկետի տևողությունը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 1046 ակադեմիական ժամ, որից 280-ը կազմել է դասընթացների, 26-ը՝ քննաշրջանի, 720-ը՝ փորձաշրջանի, 20-ը՝ հրավիրյալ մասնագետների դասախոսությունների ժամաքանակը:

Ընդհանուր առմամբ կազմակերպվել է 687 ունկնդիրների մասնագիտական պատրաստում, վերապատրաստում և հատուկ ուսուցում:

III. ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- 1) դատախազների տարեկան վերապատրաստում.
- 2) դատախազների լրացուցիչ վերապատրաստում.
- 3) ՀՀ քննչական կոմիտեի քննիչների վերապատրաստում.
- 4) ՀՀ քննչական կոմիտեի քննիչների լրացուցիչ վերապատրաստում.
- 5) ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստում.
- 6) ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստում.
- 7) ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստում.
- 8) դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
- 9) քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
- 10) դատախազների հատուկ ուսուցում.
- 11) ՀՀ քննչական կոմիտեի քննիչների հատուկ ուսուցում:

1. Վերապատրաստում

• **Դատախազների վերապատրաստում:** Խորհրդի 2017 թվականի հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/17/4 որոշմամբ հաստատված՝ «Դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա դատախազների վերապատրաստումն իրականացվել է ուսուցման առկա և հեռավար ձևերով: Հարակից մասնագիտական դասընթացները կազմակերպվել են հեռավար, իսկ ընդհանուր և հատուկ մասնագիտականները՝ առկա ուսուցման ձևով:

Դատախազների ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների ուսումնառության ժամկետի տևողությունը, կազմել է 40-ական ակադեմիական ժամ:

Դասընթացները կազմակերպվել են հետևյալ ժամանակացույցին համապատասխան.

ա) ընդհանուր մասնագիտական դասընթացներ՝ 18.04–28.04.2017թ.

բ) հատուկ մասնագիտական դասընթացներ՝ 04.09-08.12.2017թ.

գ) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ՝ 14.06-07.07.2017թ.:

Խմբերում ընդգրկվել է 11-31 դատախազ:

Հայրով ներկայացվել է 322 ՀՀ, 15՝ ԼՂՀ դատախազ: Վերապատրաստում անցել են.

ա) ընդհանուր մասնագիտական դասընթացներով՝ 37 ՀՀ դատախազ,

բ) հատուկ մասնագիտական դասընթացներով՝ 293 ՀՀ և 15 ԼՂՀ դատախազ:

գ) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներով՝ 2 ՀՀ դատախազ:

• **ՀՀ քննչական կոմիտեի քննիչների վերապատրաստում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2017թ. փետրվարի 21-ի թիվ 3 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա քննիչների վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով:

Ուսուցման ծրագրի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի քննիչների ուսումնառության ժամկետի տևողությունը կազմել է 30 ակադեմիական ժամ:

Դասընթացներն իրականացվել են 2 փուլով՝ 25.04-30.06.17թ. և 24.10- 24.11.17թ.:

Խմբերում ընդգրկվել է 14-26 քննիչ:

Հայրով ներկայացվել է 326 քննիչ: Վերապատրաստում անցել է 289 քննիչ:

• **ՀՀ քննչական կոմիտեի քննիչների լրացուցիչ վերապատրաստում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2017թ. փետրվարի 21-ի թիվ 3 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների լրացուցիչ վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա քննիչների վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով:

Ուսուցման ծրագրի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի քննիչների լրացուցիչ վերապատրաստման ուսումնառության ժամկետի տևողությունը կազմել է 50 ակադեմիական ժամ:

Խմբերում ընդգրկվել է 21 քննիչ: Լրացուցիչ վերապատրաստումն իրականացվել է 2 խմբով՝ ապրիլի 10-ից 22-ը:

Հայրով ներկայացվել է 42 քննիչ: Վերապատրաստում անցել է 39 քննիչ:

• **ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստում:** ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստումն իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի քննիչների հետ համատեղ՝ առկա ուսուցման ձևով:

Վերապատրաստումն իրականացվել է 27.06-30.06.2017թ.:

Հայրով ներկայացվել է 1 քննիչ, ով անցել է վերապատրաստումը:

• **Դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստում:** Խորհրդի 2017 թվականի հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/17/4 որոշմամբ հաստատված «Դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով՝ 1 խմբով, և ավարտվել վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:

Խմբում ընդգրկվել է 20 պետական ծառայող:

Վերապատրաստումն իրականացվել է 28.02-02.03.2017թ.:

Հայրով ներկայացվել է դատախազության աշխատակազմում 20 պետական ծառայող: Բոլորն անցել են վերապատրաստում:

• **ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 21-ի թիվ 3 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով՝ 3 խմբով, և ավարտվել վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:

Խմբերում ընդգրկվել է 18-21 պետական ծառայող:

Վերապատրաստումն իրականացվել է 27.03-13.04.2017թ:

Հայրով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի 59 պետական ծառայող, որոնցից վերապատրաստում անցել են 58-ը:

2. Մասնագիտական պատրաստում

• **Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:** Խորհրդի 2017թ. հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/17/4 որոշմամբ հաստատված «Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է մասնագիտական պատրաստում:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսումնառությունն անցկացվել է 4 հատվածով: Ուսումնառության ժամկետի տևողությունը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 1070 ակադեմիական ժամ, որից 300-ը կազմել է դասընթացների, 30-ը՝ քննաշրջանի, 720-ը՝ փորձաշրջանի, 20-ը՝ հրավիրյալ մասնագետների դասախոսությունների ժամաքանակը:

Դասընթացները կազմակերպվել են 1 խմբով՝ 27.02- 13.10.2017թ:

Ուսումնառությանը մասնակցել է դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 21 անձ (այդ թվում, 1-ը՝ ԼՂՀ-ից):

Հայրով ներկայացվել է դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 21 անձ, որոնցից մասնագիտական պատրաստումն ավարտել է 21 անձ, որոնցից 1-ը՝ ԼՂՀ-ից:

• **Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 21-ի թիվ 3 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:

Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսումնառությունն անցկացվել է 4 հատվածով: Ուսումնառության ժամկետի տևողությունը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է՝ 268 ակադեմիական ժամ, որից 250-ը՝ դասընթացները, 18-ը՝ քննաշրջանը, ինչպես նաև՝ 3 ամիս փորձաշրջանը:

Դասընթացները կազմակերպվել են 2 խմբով. առաջինը՝ 20.02-17.10.2017թ., երկրորդը՝ 03.04-28.11.2017թ.:

Ուսումնառությանը մասնակցել են քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 53 անձանցից 52-ը (1-ին խումբ՝ 24, 2-րդ խումբ՝ 28 հոգի):

Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանցից 1-ը ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2017թ. մայիսի 25-ի թիվ 239-Ա հրամանով հանվել է քննիչների թեկնածությունների ցուցակից:

Հայտով ներկայացվել է քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 53 անձ, որոնցից մասնագիտական պատրաստումն ավարտել է 51-ը (24-ը՝ 1-ին, 27-ը՝ 2-րդ խմբից):

3. Հատուկ ուսուցում

• **Դատախազների հատուկ ուսուցում:** Խորհրդի 2017 թվականի հունվարի 26-ի թիվ ԿԽ-001/17/4 որոշմամբ հաստատված «Դատախազների հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա դատախազների հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվել են 3 խմբով՝ 1-ական օր տևողությամբ՝ 07, 14 և 21.10.2017թ.:

Հայտով ներկայացվել է 80 դատախազ, որոնցից հատուկ ուսուցման դասընթացներին մասնակցել են 55-ը:

• **ՀՀ քննչական կոմիտեի քննիչների հատուկ ուսուցում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2017թ. փետրվարի 21-ի թիվ 3 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի քննիչների հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա քննիչների հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվել են 15 խմբով՝ 1-ական օր տևողությամբ, 2 փուլով՝ 29.04-01.07.17թ. և 28.10-25.11.17թ.:

Հայրով ներկայացվել է 622 քննիչ, որոնցից հարուկ ուսուցման դասընթացների մասնակցել են 544-ը:

Ընդհանուր առմամբ կազմակերպվել է 1408 ունկնդիրների մասնագիտական պատրաստում, վերապատրաստում, լրացուցիչ վերապատրաստում և հատուկ ուսուցում:

IV. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- 1) մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրերի նախագծերի մշակում.
- 2) առարկայական ծրագրերի մշակում (դասավանդողների հետ համատեղ).
- 3) մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցերի մշակում.
- 4) աշխատաժողովների, հրավիրյալ դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում, նյութերի մշակում.
- 5) ընթացիկ այլ աշխատանքներ:

1. Մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրերի նախագծերի մշակում

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են մասնագիտական պատրաստման 5, վերապատրաստման 15, լրացուցիչ վերապատրաստման 1 և հատուկ ուսուցման 7 (**ընդհանուր առմամբ՝ 28**) տարեկան հետևյալ ուսումնական ծրագրերի նախագծերը՝

- ✓ Դատավորների 2017թ. թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման տարեկան ծրագիր,
- ✓ Դատավորների և Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման 2017թ. և 2018թ. տարեկան ծրագրեր,
- ✓ Դատավորների հատուկ ուսուցման 2017թ. և 2018թ. տարեկան ծրագրեր,
- ✓ Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման 2017թ. և 2018թ. տարեկան ծրագրեր,
- ✓ Դատական ծառայողների (այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի) վերապատրաստման 2017թ. և 2018թ. տարեկան ծրագրեր,

- ✓ Դատախազների 2017թ. և 2018թ. թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման տարեկան ծրագրեր,
- ✓ Դատախազների տարեկան վերապատրաստման 2017թ. և 2018թ. տարեկան ծրագրեր,
- ✓ Դատախազների հատուկ ուսուցման 2017թ. և 2018թ. տարեկան ծրագրեր,
- ✓ Դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման 2017թ. և 2018թ. տարեկան ծրագրեր,
- ✓ ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2017թ. և 2018թ. տարեկան ծրագրեր,
- ✓ ՀՀ քննչական կոմիտեի քննիչների վերապատրաստման 2017թ. և 2018թ. տարեկան ծրագրեր,
- ✓ ՀՀ քննչական կոմիտեի քննիչների լրացուցիչ վերապատրաստման 2017թ. տարեկան ծրագիր,
- ✓ ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների վերապատրաստման 2017թ. և 2018թ. տարեկան ծրագրեր,
- ✓ ՀՀ քննչական կոմիտեի քննիչների հատուկ ուսուցման 2017թ. և 2018թ. տարեկան ծրագրեր,
- ✓ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների տարեկան վերապատրաստման 2018թ. տարեկան ծրագիր,
- ✓ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների հատուկ ուսուցման 2018թ. տարեկան ծրագիր:

Ուսուցման նշված ծրագրերի նախագծերը մշակելիս հիմք են ընդունվել ներպետական և միջազգային մի շարք իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև հաշվի են առնվել շահագրգիռ գերատեսչությունների կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունները:

2. Առարկայական ծրագրերի մշակում

«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաստատված՝ 2017թ. տարեկան ծրագրերով սահմանված առարկայացանկի և կրթա-

կան չափորոշիչների հիման վրա Գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժինը առարկայական կուրսերի դասավանդողների հետ համատեղ իրականացրել է **թվով 149 առարկայական ծրագրերի** մշակման կամ վերամշակման աշխատանքներ: Վերամշակված առարկայական ծրագրերի հիմքում դրվել են նախորդ տարիներին մշակված ծրագրերը: Առարկայական ծրագրերը մշակելիս (վերամշակելիս) հիմք են ընդունվել իրավունքի ոլորտում առկա զարգացումները, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական նոր դիրքորոշումները, ինչպես նաև հանրապետությունում ընթացող դատաիրավական բարեփոխումները և իրավակիրառ պրակտիկայում առկա առավել խնդրահարույց հարցերը: Այդ կապակցությամբ իրականացվել է համապատասխան ոլորտի բազմակողմանի ուսումնասիրություն՝ նշված ծրագրերն Ակադեմիայի գործունեության նպատակներին և ունկնդիրների պահանջներին առավելագույնս համապատասխանեցնելու համար:

Ա) Մասնագիտական պատրաստման ծրագրեր.

Հաշվետու ժամանակահատվածում **մշակվել են** դատավորների, դատախազների, քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման տարեկան ծրագրերում ներառված **16** և **վերամշակվել՝ 53** առարկայական ծրագրեր: Մասնավորապես՝

• **Դատավորների 2017թ. թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց** մասնագիտական պատրաստման 34 առարկայական ծրագրերից վերամշակվել են 31-ը: Մշակվել են հետևյալ 3 նոր առարկայական ծրագրերը՝

- 1) JC-Q-032-17 – Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը.
- 2) JC-Q-045-17 – Խոցելի անձանց մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները.
- 3) JC-G-024-17 – Դատական հոգեբանության և դատական հոգեբուժության հիմունքները:

• **Դատախազների 2017թ. թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց** մասնագիտական պատրաստման 19 առարկայական ծրագրերից վերամշակվել են 15-ը: Մշակվել են հետևյալ 4 նոր առարկայական ծրագրերը՝

- 1) PC-Q-045-17 – Խոցելի անձանց մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները.
- 2) PC-Q-046-17 – Օպերատիվ-հետախուզական գործունեության հիմնախնդիրները.
- 3) PC-Q-047-17 – Քրեական գործերով քննության մեթոդիկայի արդի հարցերը.
- 4) PC-G-024-17 – Դատական հոգեբանության և դատական հոգեբուժության հիմունքները:

• **Քննիչների 2017թ. թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց** մասնագիտական պատրաստման 16 առարկայական ծրագրերից վերամշակվել են 7-ը: Մշակվել են հետևյալ 9 նոր առարկայական ծրագրերը՝

- 1) IC-Q-047-17 – Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում.
- 2) IC-Q-048-17 – Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը.
- 3) IC-Q-049-17 – Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը.
- 4) IC-Q-050-17 – Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները.
- 5) IC-Q-051-17 – Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը.
- 6) IC-Q-052-17 – Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցերը.
- 7) IC-C-030-17 – Գույքային հարցերը քրեական դատավարության մինչդատական վարույթում.
- 8) IC-J-008-17 – Քննիչի մասնագիտական էթիկա.
- 9) IC-G-024-17 – Դատական հոգեբանության և դատական հոգեբուժության հիմունքները:

Բ) Վերապատրաստման ծրագրեր.

Հաշվետու ժամանակահատվածում **մշակվել են** վերապատրաստումների տարեկան ծրագրերում ներառված **18** և **վերամշակվել՝ 62** առարկայական ծրագրեր: Մասնավորապես՝

• **Դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց** տարեկան վերապատրաստման 26 առարկայական ծրագրերից վերամշակվել են 17-ը: Մշակվել են հետևյալ 9 նոր առարկայական ծրագրերը՝

- 1) J-J-020-17 – ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները.
- 2) J-J-026-17 – Իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրները.
- 3) J-C-028-17 – ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները քաղաքացիական գործերով.
- 4) J-A-013-17 – ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները վարչական գործերով.
- 5) J-A-014-17 – Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության հիմնահարցերը.
- 6) J- A-015-17 – Ընտրական վեճերի արդի հարցերը.
- 7) J-Q-024-17 – Պատժի նշանակման կանոնների քրեաիրավական և քրեադատավարական խնդիրները.
- 8) J-Q-044-17 – ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները քրեական գործերով.
- 9) J-Q-045-17 – Խոցելի անձանց մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները:

• **Դատախազների** տարեկան վերապատրաստման 14 առարկայական ծրագրերից վերամշակվել են 11-ը: Մշակվել են հետևյալ 3 նոր առարկայական ծրագրերը՝

- 1) P-J-029-17 – Փաստարկում և հոետորաբանություն.
- 2) P-A-010-17 – ՀՀ Էկոլոգիական իրավունքի արդի հարցերը.
- 3) PC-Q-045-17 – Խոցելի անձանց մասնակցությամբ վարույթի անձնահատկությունները:

• **ՀՀ քննչական կոմիտեի քննիչների** տարեկան վերապատրաստման (ներառյալ՝ լրացուցիչ վերապատրաստման) 10 առարկայական ծրագրերից վերամշակվել են 4-ը: Մշակվել են հետևյալ 6 նոր առարկայական ծրագրերը՝

- 1) I-Q-047-17 – Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում.
- 2) I-Q-048-17 – Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը.
- 3) I-Q-049-17 – Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը.
- 4) I-Q-050-17 – Մինչդատական կալանքը և քննության հարակից հիմնախնդիրները.
- 5) I-Q-051-17 – Քրեական գործերի քննության ընդհանուր մեթոդաբանությունը.
- 6) I-J-008-17 – Քննիչի մասնագիտական էթիկա:

Վերամշակվել են նաև՝

- **դատավորների, դատախազների, քննիչների** հատուկ ուսուցման ծրագրերով նախատեսված թվով 3 առարկայական ծրագրերը,
- **դատական ծառայողների** (ներառյալ՝ ՄԻՊ աշխատակազմի) տարեկան վերապատրաստման թվով 16 առարկայական ծրագրերը,
- **դատական կարգադրիչների** տարեկան վերապատրաստման և հատուկ ուսուցման թվով 4 առարկայական ծրագրերը,
- **դատախազության աշխատակազմում պետական ծառայողների** տարեկան վերապատրաստման թվով 4 առարկայական ծրագրերը,
- **ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների** տարեկան վերապատրաստման թվով 3 առարկայական ծրագրերը:

3. Մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակում

Դատավորիների, դատախազների, քննիչների թեկնածությունների 2017թ. ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման արդյունքների գնա-

հատման համար իրականացվել է մասնագիտական պատրաստման ծրագրերում ներառված առարկայական կուրսերի (դասընթացների) քննական նյութի կազմում, մշակում կամ վերամշակում, յուրաքանչյուր քննական հանձնարարության համար գնահատման չափանիշների մշակում, քննական առաջադրանքների տիպային պատասխանների մշակում:

Մասնավորապես, մշակվել են՝

- ✓ քննական խնդիրներ,
- ✓ գրավոր քննության հարցաշարեր,
- ✓ թեստային առաջադրանքներ,
- ✓ բանավոր քննությունների քննական հարցաշարեր և հարցատոմսեր,
- ✓ քննական առաջադրանքների պատասխանների ուղեցույցներ:

Յուրաքանչյուր քննական նյութի առանձնահատկություններին և առաջադրանքների քանակին համապատասխան մշակվել են գնահատման չափանիշներ:

Ընդհանուր առմամբ իրականացվել է՝

- ✓ 36 դասընթացի քննական նյութի կազմում, մշակում կամ վերամշակում դատավորների թեկնածությունների 2017թ. ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար,
- ✓ 19 դասընթացի քննական նյութի կազմում, մշակում կամ վերամշակում դատախազների թեկնածությունների 2017թ. ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար,
- ✓ 16 դասընթացի քննական նյութի կազմում, մշակում կամ վերամշակում քննիչների թեկնածությունների 2017թ. ցուցակներում ընդգրկված անձանց յուրաքանչյուր խմբի քննությունների համար (2 խումբ):

4. Աշխատաժողովների, հրավիրյալ մասնագետների դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում

• 2017թ. հունվարի 27-ից 28-ը Ծաղկաձորում կազմակերպվել է աշխատաժողով՝ նվիրված ***ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակարարի հաստատության ներկայացուցչության*** հետ համագործակցության արդյունքում մշակված ***«Փախստականների իրավունք» հեռուստուցման դասընթացի ավարտին***: Աշխատ-

տաժողովին մասնակցել են **ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի, ՀՀ վարչական վերաքննիչ և վարչական դատարանների այն դատավորները**, որոնք մասնակցել և հաջողությամբ ավարտել են 10 շաբաթ տևողությամբ վերապատրաստման վերոհիշյալ դասընթացը:

- 2017թ. մարտի 7-ին **ՀՀ վարչական և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանների 21** դատավորների մասնակցությամբ **Վենետիկի հանձնաժողովի** հետ համատեղ կազմակերպվել է վարչական արդարադատության շրջանակներում **ընտրական իրավունքի պաշտպանությանը** նվիրված աշխատաժողով:

- 2017թ. մայիսի 2-ից 3-ը **Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ)** հետ համատեղ **քրեական մասնագիտացմամբ դատավորների և դատախազների** թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց համար իրականացվել է **պատժի նշանակման հիմնախնդիրներին** նվիրված սեմինար:

- **Եվրոպայի խորհրդի** հետ համատեղ «Կանանց համար արդարադատության մատչելիության բարելավում Արևելյան գործընկերության վեց երկրներում» ծրագրի շրջանակում 2017թ. հունիսի 15-ից 16-ը՝ **դատավորների և դատախազների** թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց համար (Երևանում), 2017թ. հունիսի 17-ից 18-ը՝ **գործող դատավորների և դատախազների** համար (Ադվերանում), իրականացվել են «**Կանանց համար արդարադատության հավասար մատչելիության ապահովում՝ դատավորների և դատախազների գործունեության միջոցով**» թեմայով սեմինարներ:

- 2017թ. հունիսի 21-ին և օգոստոսի 2-ին **քննիչների թեկնածությունների** ցուցակում ընդգրկված անձանց (1-ին և 2-րդ խմբեր) համար կազմակերպվել է հրավիրյալ դասախոսություն «**Քրեական գործերի քննության ժամանակակից սկզբունքներն ու լավագույն փորձը. սպանությունների քննություն**» թեմայով, որը վարել է **ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության** ներկայացուցիչ, իրավապահ հարցերով ավագ խորհրդատու Ադի Հոլլովեյը:

- 2017թ. հունիսի 30-ին **դատավորների և դատախազների թեկնածությունների** ցուցակներում ընդգրկված անձանց համար կազմակերպվել է դասախոսություն՝ նվիրված **դատավորների և դատախազների անկախությանն ու այդ բնագավառում ամերիկյան փորձին**, որը վարել է **ԱՄՆ 7-րդ շրջանի դաշնային դատարանների համար կառավարման գործադիր տնօրեն** Քոլինս Ֆիցպատրիկը:

• 2017թ. հուլիսի 7-ից 9-ը **Եվրոպայի խորհրդի** հետ համատեղ «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի շրջանակում Ակադեմիայի **դասախոսների համար Դիլիջանում իրականացվել է վերապատրաստում դասավանդման մեթոդաբանության** վերաբերյալ:

• 2017թ. հուլիսի 27-ին **դատավորների և դատախազների թեկնածությունների** ցուցակներում ընդգրկված անձանց համար կազմակերպվել է սեմինար «**Հոգեֆիզիոլոգիական հետազոտություններ պոլիգրաֆի կիրառմամբ դատաիրավական համակարգում**» թեմայով, որը վարել են կենս. գիտ. թեկ., փորձագետ-խորհրդական Գարեգին Համբարձումյանը և կենս. գիտ. թեկ., փորձագետ-պոլիգրաֆոլոգ Կարեն Պանչուլյանը:

• 2017թ. սեպտեմբերի 6-ին **քննիչների թեկնածությունների** ցուցակում ընդգրկված անձանց և **դատախազների**, ինչպես նաև **ՀՀ ոստիկանության** ներկայացուցիչների համար կազմակերպվել է հրավիրյալ դասախոսություն «**Առաջնային արձագանքը, քննությունը և դատախազական հսկողությունն ընդհանրական բռնության գործերով**» թեմայով, որը վարել է **ԱՄՆ Դենվեր շրջանի գլխավոր դատախազի ավագ տեղակալ** Էլիսոն Ռոքերին:

• 2017թ. սեպտեմբերի 28-ին **ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման մոնիթորինգի միջազգային ինստիտուտի (ՄԽՎ ԺԶՄՄԻ) երևանյան մասնաճյուղի** հետ համատեղ կազմակերպվել է «**Դատական իշխանությունը՝ ՀՀ-ում սահմանադրաիրավական բարեփոխումների լույսի ներքո**» խորագրով համաժողով: Համաժողովին մասնակցել են ՀՀ ԱԺ պատգամավորներ, դատաիրավական համակարգի ներկայացուցիչներ, իրավաբան-գիտնականներ, միջազգային փորձագետներ, այլ հյուրեր:

• 2017թ. հոկտեմբերի 9-ից 10-ը **Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ)** հետ համատեղ «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի շրջանակում **ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի և ՀՀ վարչական դատարանի դատավորների** համար կազմակերպվել է երկօրյա սեմինար **վարչական դատավարության արդի հարցերի** վերաբերյալ, որը վարել են **Գերմանիայի Հեսեն երկրամասի Գերագույն վարչական դա-**

տարանի պաշտոնաթող նախագահ Վոլֆգանգ Ռայմերսը, **Քորլենցի վարչական դատարանի փոխնախագահ** Կլաուս Մայերը:

• 2017թ. հոկտեմբերի 12-ից 13-ը **ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի** հետ համատեղ Արցախի Հանրապետության Շուշի քաղաքում անցկացվել է խորհրդաժողով՝ **«Փողերի լվացման գործերի քննության արդի հարցերը»** թեմայով: Խորհրդաժողովին մասնակցել են ներկայացուցիչներ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների ազգային անվտանգության ծառայություններից, Գլխավոր դատախազություններից, Արցախի Հանրապետության Գերագույն դատարանից, Ընդհանուր իրավասության դատարաններից, Ֆինանսների նախարարությունից, ՀՀ կենտրոնական բանկից, ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ քննչական կոմիտեից, ՀՀ ոստիկանությունից, Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյից, ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովից, Արդարադատության ակադեմիայից, Ֆինանսական դիտարկումների կենտրոնից:

• Հոկտեմբերի 27-ին **գործող դատավորների, Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց, ինչպես նաև Փաստաբանական դպրոցի ունկնդիրների** համար կազմակերպվել է հրավիրյալ դասախոսություն հաշտարարության ինստիտուտին առնչվող հիմնախնդիրների և արդի զարգացումների վերաբերյալ, որը վարել է **ԱՄՆ-ից ժամանած առաջատար հաշտարար, նախկին դատավոր** Դանիել Ուայնշտայնը:

• 2017թ. նոյեմբերի 1-ից 3-ը **ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակի** հետ համատեղ **ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ հարուկ քննչական ծառայության, ՀՀ քննչական կոմիտեի քննիչների** համար իրականացվել է եռօրյա վերապատրաստում՝ նվիրված բաց աղբյուրների կիրառմանը, որը վարել են **ԱՄՆ Հեղաքննությունների դաշնային բյուրոյից** ժամանած փորձագետ, գործառնությունների մասնագետ Ամիրա Լաուրերը, ինչպես նաև **ԹՊԻՀ գրասենյակի իրավապահ հարցերով ավագ խորհրդադատ** Ադի Հոլովեյը: Դասախոսությանը մասնակցել են ներակայացուցիչներ ՀՀ արդարադատության նախարարությունից:

• 2017թ. նոյեմբերի 23-ին **Ակադեմիայում վերապատրաստում անցնող դատավորների** մասնակցությամբ կազմակերպվել է քննարկում **«Քաղաքացիական դատավարության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրա-**

պեությունն դարձնել արակրթական և դրանց հաղթահարման ուղիները» թեմայով, որը վարել է **Արցախի Հանրապետության դարավորների միության նախագահ** Հասմիկ Խաչատրյանը:

- 2017թ. դեկտեմբերի 12-ին և 13-ին **Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության շրջանակում Արդարադատության ակադեմիայում վերապատրաստում անցնող դարավորների** համար անցկացվել է Երևան-Ստրասբուրգ տեսակոնֆերանս՝ **«ՄԻԵԴ վերջին վճիռները Հայաստանի Հանրապետության վերաբերյալ (հարուկ անդրադարձ ՄԻԵԿ 6-րդ հոդվածին և 5-րդ հոդվածի 3-րդ մասին)»** թեմայով, որը վարել են **ԵՆ փորձագետ** Վիկտորիա Չերնիշուկը, **ՄԻԵԴ Հայաստանի դարավոր** Արմեն Հարությունյանը, **փաստաբան, ՄԻԵԴ իրավաբան** Արման Զրվանդյանը:

- 2017թ. դեկտեմբերի 14-ին կազմակերպվել է աշխատաժողով, որտեղ ներկայացվել է **Եվրոպայի խորհրդի** հետ համատեղ մշակված **«Կանանց նկարմամբ բռնության և ընտանեկան բռնության»** վերաբերյալ ԵՆ HELP առցանց ուսուցման դասընթացը: Վերջինս 2018թ. հունվարից կփորձարկվի աշխատաժողովին մասնակցած **դատախազներից, քննիչներից և փաստաբաններից բաղկացած խմբի համար:**

- 2017թ.-ին **ԵՆ/ԵՄ Արևելյան գործընկերության** 2015-2017 թվականների ծրագրային համագործակցության կառուցակարգի մաս կազմող «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումների և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի շրջանակներում իրավական ոլորտի մասնագետների համար իրականացվել է **«Ապացույցների թույլատրելիությունը քրեական դատավարությունում» HELP հեռավար դասընթացի** ադապտացում տեղական իրավական համակարգին: Դասընթացը փորձարկվել է 2017թ. փետրվար-մարտ ամիսներին **դատախազներից, քննիչներից և փաստաբաններից** բաղկացած խմբի համար:

5. Ընթացիկ այլ աշխատանքներ

- Իրականացվել է Արդարադատության ակադեմիայի ներքին ակտերի, գրությունների, այլ փաստաթղթերի նախագծերի կազմում: Մասնավորապես՝

- ✓ Արդարադատության ակադեմիայի ներքին կարգապահական կանոնների նոր խմբագրությամբ տարբերակի նախագծի, վերջինիս ընդունման հիմնավորումների մշակում,
- ✓ Արդարադատության ակադեմիայի փորձագիտական հանձնաժողովի կանոնակարգի և արխիվի կանոնակարգի, վերջիններիս ընդունման համար ուղեկցող փաստաթղթերի նախագծերի կազմում:
 - Իրականացվել են Արդարադատության ակադեմիայի առջև դրված խնդիրների կենսագործման, Ակադեմիայի բնականոն գործունեության ապահովման, ինչպես նաև՝ ի պատասխան Արդարադատության ակադեմիային ուղղված գրությունների, հարցումների, այլ փաստաթղթերի կազմման և այլ ընթացիկ աշխատանքներ:
 - Որոշակի աշխատանքներ են տարվել նաև Ակադեմիայի գրադարանի գրքային ֆոնդի գույքագրման, ավելացման, սպասարկման բարելավման ուղղությամբ: Մասնավորապես՝
 - ✓ գրադարանի հավաքածուի մատենագիտության կազմում, ցուցակագրում և հաշվառում,
 - ✓ անձր հաստատող փաստաթղթի և գրանցամատյանի միջոցով ընթերցողների գրանցում,
 - ✓ ընթերցողների սպասարկում, գրականություն որոնելու, նյութերին իրազեկ լինելու գործում օգնության ցուցաբերում,
 - ✓ արխիվային նյութերի դասակարգում և պահպանում,
 - ✓ նախորդ տարվա համեմատությամբ գրքային ֆոնդի 250 անուն նոր գրականությամբ ավելացում, այդ թվում՝ ԵՄ և ԵԽ համատեղ ծրագրի միջոցներով հրատարակված հինգ ձեռնարկով, որոնք բաժանվել են Ակադեմիայի ունկնդիրներին, ԱՄՆ Պետքարտուղարության ԹՊԻՀ-ի, Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից տրամադրված մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև պարբերաբար հրատարակվող նոր ամսագրերով և այլն:

Վ. ՀԵՌԱՌՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Հաշվետու ժամանակահատվածում դեպարտամենտն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- 1) հեռաուսուցման դասընթացների մշակում և իրականացում,
- 2) տարաբնույթ փորձարարական նորարարական թվային լուծումների մշակում,
- 3) ունկնդիրների կողմից հեռաուսուցման դասընթացների էլեկտրոնային գնահատման ապահովում,
- 4) միջազգային համագործակցության ձևավորում և զարգացում:

1. Ընդհանուր տեղեկություններ

1. Դեպարտամենտի և հրավիրված մասնագետների համատեղ ջանքերով հեռաուսուցման փաթեթների պատրաստման արևմտյան դասական մոդելների հիման վրա մշակվել է «Անչափահասի պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում» հեռաուսուցման դասընթացը:

2 «Դատավորի մասնագիտական էթիկա» թեմայի շրջանակներում մշակվել են փորձարարական նորարարական խաղաֆիկացված երկու ուսումնական տեսանյութեր:

3. Նախաձեռնվել է ունկնդիրների կողմից հեռաուսուցման դասընթացների էլեկտրոնային գնահատման իրականացում:

4. Ակտիվ գործունեություն է ծավալվել միջազգային համագործակցության ոլորտում. քայլեր են ձեռնարկվել հետևյալ կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ կապեր ձևավորելու և զարգացնելու ուղղությամբ՝

- ✓ *ՄԱԿ-ի մանկակական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակ,*
- ✓ *ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակարարի (UNHCR) գրասենյակ,*
- ✓ *Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների կրթություն իրավական ոլորտի մասնագետների համար»՝ HELP (Human Rights Education for*

Legal Professionals) ծրագիր,

- ✓ *ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոն,*
- ✓ *«Կասպերսկի» լաբորատորիա:*

2. Հեռաուսուցման դասընթացներ

Ընթացիկ տարվա սեպտեմբերի 13-ից նոյեմբերի 27-ը կազմակերպվել և իրականացվել են հեռաուսուցման հետևյալ դասընթացները՝

- ✓ *«Փաստարկում և հռետորիկա»,*
- ✓ *«Փախստականների իրավունք»,*
- ✓ *«Անչափահասի իրավունքների պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում»,*
- ✓ *«Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն»:*

Վերը նշված դասընթացներին մասնակցության հայտ են ներկայացրել **429 դատավորներ և դատախազներ**, որոնք կոնկրետ դասընթացի շրջանակներում ապահովվել են մասնակցություն՝ պատասխանելով ինքնաստուգիչ հարցերի:

Յուրաքանչյուր դասընթացի տևողությունը 10 շաբաթ էր: Մասնակցելով նշված դասընթացներից յուրաքանչյուրին՝ ունկնդիրները հնարավորություն են ունեցել անցնել 40 ակադեմիական ժամին համարժեք վերապատրաստում:

• **«Փաստարկում և հռետորիկա»** դասընթացին մասնակցելու համար **հայտագրվել են 121 դատավորներ և դատախազներ**, որոնցից **միայն 2-ը չեն ապահովվել** իրենց մասնակցությունը դասերի առնվազն 80%-ին, ինչը պայմանավորված է եղել օբյեկտիվ գործոններով՝ մինչև դասընթացի ավարտը լրացել է նրանց պաշտոնավարման տարիքը:

Դասընթացին փաստացի մասնակցել են **48 դատավոր և 73 դատախազ:**

Դասերի առնվազն 80%-ին իրենց մասնակցությունն **ապահովել են բոլոր դատավորները:**

Դատախազներից **69-ը ապահովել են 40 ակադեմիական ժամին համարժեք**

մասնակցություն, 2-ը՝ 36, իսկ 2-ի պարագայում՝ մինչև դասընթացի ավարտը լրացել է նրանց պաշտոնավարման տարիքը:

Արդյունքում, տվյալ դասընթացին 40 ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն են ապահովել **դատավորների 100%-ը և դատախազների 95%-ը:**

Վերապատրաստվող **դատավորները** (միջինացված տարբերակով) 100 ինքնաստուգիչ հարցերից ճիշտ պատասխանել են **90-ին**, իսկ **դատախազները՝ 84-ին: Դատավորներից միայն 10-ը, իսկ դատախազներից միայն 7-ն են, որ ապահովել են 100%-անոց արդյունք՝** ճիշտ պատասխանելով բոլոր ինքնաստուգիչ հարցերին: **24 դատավոր** (դասընթացին մասնակցած դատավորների 50%-ը) և **34 դատախազ** (դասընթացին մասնակցած դատախազների 47%-ը) **ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի 90-100%-ին**, իսկ **4 դատախազ** (դասընթացին մասնակցած դատախազների 5%-ը) ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի 50%-ից պակասին: Նման ցուցանիշով բնութագրվող **դատավոր չի արձանագրվել:**

- **«Փախստականների իրավունք»** դասընթացին մասնակցելու համար **հայրագրվել են 32 դատավոր և 6 դատախազ, որոնք ապահովել են 40 ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:** Դասընթացի շրջանակներում վերապատրաստվող դատավորները (միջինացված տարբերակով) ճիշտ են պատասխանել 100 ինքնաստուգիչ հարցերի 80%-ին: Ոչ մի դատավոր և դատախազ **չի կարողացել ապահովել ճիշտ պատասխանների 100%-անոց արդյունք:**

Վերապատրաստվող դատավորներից **միայն 6-ի** ներկայացրած ճիշտ պատասխաններն են եղել **90-100%-ի միջակայքում**, իսկ դատախազներից **ոչ մեկին չի հաջողվել** գրանցել նմանատիպ արդյունք: Ինքնաստուգիչ հարցերի **50%-ից պակասին** ճիշտ են պատասխանել **միայն 1 դատավոր և 2 դատախազ:**

- **«Անչափահասի իրավունքների պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում»** հեռաուսուցման դասընթացին մասնակցելու համար **հայրագրվել են 35 դատավոր և 119 դատախազ:**

Դատավորներից **34-ը ապահովել են 40 ակադեմիական ժամին** համարժեք մասնակցություն, իսկ **1-ի պարագայում՝** լրացել է նրա պաշտոնավարման տարիքը:

Դատախազներից **114-ը ապահովել են 40, 2-ը՝ 36, 1-ը՝ 28 և 1-ը՝ 20 ակադեմիական ժամին** համարժեք մասնակցություն, իսկ **1-ի պարագայում՝** լրացել է նրա պաշտոնավարման տարիքը:

Արդյունքում, տվյալ դասընթացին **40 ակադեմիական ժամին** համարժեք մասնակցություն են ապահովել **դատավորների 97%-ը և դատախազների 96%-ը:**

Միջինացված տարբերակով, վերապատրաստվող **դատավորները** 100 ինքնաստուգիչ հարցերից ճիշտ պատասխանել են **83-ին**, իսկ **դատախազները՝ 78-ին:** Ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների թվում **չեն եղել 100%-անոց արդյունք ապահովողներ՝** ինքնաստուգիչ բոլոր հարցերին ճիշտ պատասխանողներ:

5 դատավոր (դասընթացին մասնակցած դատավորների 14%-ը) և **16 դատախազ** (դասընթացին մասնակցած դատախազների 14%-ը) **ճիշտ են պատասխանել** ինքնաստուգիչ հարցերի **90-100%-ին**, իսկ **8 դատախազ** (դասընթացին մասնակցած դատախազների 6%-ը) **ճիշտ են պատասխանել** ինքնաստուգիչ հարցերի **50%-ից պակասին:** Նման ցուցանիշով բնութագրվող **դատավոր չի արձանագրվել:**

• «Կառավարչական հմտություններ և ներագրման հոգեբանություն» դասընթացին մասնակցելու համար **հայտագրվել են 116 դատավոր և դատախազ**, որոնք բոլորը մասնակցել են հեռաուսուցման դասընթացի առնվազն 80%-ին:

Դասընթացին փաստացի մասնակցել են **47 դատավոր և 69 դատախազ:** **Դասընթացին մասնակցած բոլոր** դատավորները **ապահովել են 40 ակադեմիական ժամին** համարժեք մասնակցություն: Դատախազներից **68-ը ապահովել են 40, 1-ը՝ 36 ակադեմիական ժամին** համարժեք մասնակցություն:

Արդյունքում, տվյալ դասընթացին **40 ակադեմիական ժամին** համարժեք մասնակցություն են ապահովել **դատավորների 100%-ը և դատախազների 98%-ը:**

Միջինացված տարբերակով, վերապատրաստվող **դատավորները** 50 ինքնաստուգիչ հարցերից **ճիշտ պատասխանել են 42-ին**, իսկ **դատախազները՝ 41-ին:**

Դատավորներից 2-ը, իսկ **դատախազներից՝ 15-ը** ապահովել են **100%-անոց արդյունք՝** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ բոլոր հարցերին:

26 դատավոր (դասընթացին մասնակցած դատավորների 55%-ը) և **36 դատախազ** (դասընթացին մասնակցած դատախազների 52%-ը) ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի **90-100%-ին**, իսկ **2 դատավոր** (դասընթացին մասնակցած դա-

տավորների 4%-ը) և **8 դատախազ** (դասընթացին մասնակցած դատախազների 11%-ը) ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի **50%-ից պակասին**:

3. Ընդհանրացված ամփոփում

Հաշվետու ժամանակահատվածում **«Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն»**, **«Փախստականների իրավունք»**, **«Փաստարկում և հոնորրիկա»**, **«Անչափահասի պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում»** հեռաուսուցման դասընթացների շրջանակներում **վերապատրաստվելու հայր են ներկայացրել 429 դատավոր և դատախազ** (162 դատավոր և 267 դատախազ), որոնցից **423-ը բավարարել են** վերապատրաստված համարվելուն ներկայացվող պահանջին, այսինքն՝ մասնակցել են հեռաուսուցման համապատասխան դասընթացի առնվազն 80%-ին: **Մեկ դատավորի և երեք դատախազի** պարագայում այդ մասնակցության ցուցանիշն ավելի ցածր է, քանի որ մինչև դասընթացների ավարտը լրացել է նրանց պաշտոնավարման տարիքը: **Երկու դատախազ էլ չեն հաղթահարել** հեռաուսուցման դասընթացի մասնակցության 80 տոկոսանոց շեմը:

Հեռաուսուցմանն ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների մասնակցության աստիճանը եղել է բարձր: Դասընթացներին մասնակցած **162 դատավորների առնվազն 99%-ը ապահովել է 40 ակադեմիական ժամ** մասնակցություն, իսկ **267 դատախազների պարագայում այդ ցուցանիշը 96% է**:

VI. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիան անցում է կատարել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման նոր համակարգին՝ «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի դրույթներին և դրանից բխող իրավական ակտերին համապատասխան: Այդ կապակցությամբ ներդրվել և գործարկվել է համակարգչային նոր ծրագիր:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ Ակադեմիային պատկանող վերագնահատված շարժական և անշարժ գույքը հաշվեկշռում արտացոլվել է իրական (շուկայական) արժեքով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը գումար հատկացնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը գույք ամրացնելու մասին» N 601-Ն որոշմամբ Ակադեմիային է ամրացվել **14770.6 հազ. դրամի** նոր գույք և համակարգչային սարքավորումներ:

ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 23-ի «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 741-Ա որոշմամբ Ակադեմիային են ամրացվել նաև «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում հաշվառված՝ **1447.0 հազ. դրամ** հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցներ, որոնցից 3-ը ենթակա են վերագնահատման:

Վերագնահատման է ենթակա նաև ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 26-ի «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով գույք հանձնելու մասին» N 1357-Ա որոշմամբ Ակադեմիային հանձնված «Տոյոտա Քեմրի» մակնիշի ավտոմեքենան:

Անկախ աուդիտ իրականացնող անձի կողմից ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության տարեկան վերստուգման արդյունքում շտկվել են գրեթե բոլոր բացահայտված բացթողումները:

1. Եկամուտներ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմայի նախահաշվով նախատեսվել են եկամուտների հետևյալ աղբյուրները՝

- 1) վերադաս մարմնի կողմից, դրամաշնորհի ձևով ստացվող եկամուտներ՝ **230 միլիոն 167 հազար 2 հարյուր** դրամ՝ «վերապատրաստման ծառայություններ» ծրագրով (**23 միլիոն 267 հազար 2 հարյուր դրամով պակաս**, քան 2016 թվականին),
- 2) «Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրով՝ **64 միլիոն 620 հազար** դրամ,
- 3) «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ և ՀՀ քննչական կոմիտեի միջև 27.02.2017թ. կնքված «Վերապատրաստման, մասնագիտական պատրաստման և հատուկ ուսուցման ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ «ՀՀՔԿԴ-ԲԸԱՀԾՁԲ-17/11» պայմանագրի շրջանակներում՝ **30 միլիոն 263 հազար** դրամ,
- 4) «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ և Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի միջև 23.10.2017թ. կնքված թիվ ARM01/2017/0000000118/000 համաձայնագրի շրջանակներում՝ **5 միլիոն 974 հազար 5 հարյուր** դրամ,
- 5) «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ և Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի միջև 27.03.2017թ. կնքված համաձայնագրի շրջանակներում՝ **22 միլիոն 852 հազար 5 հարյուր** դրամ,
- 6) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ միջև 25.05.2017թ. կնքված թիվ N ՄԻՊԱ-ԾՁԲ-29 պայմանագրի շրջանակներում՝ **320 հազար** դրամ,
- 7) հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում բանկային տոկոսներից հաշվեգրված եկամուտ՝ **219 հազար 2 հարյուր** դրամ:

2. Ծախսեր

2017 թվականին Ակադեմայի նախահաշվով նախատեսվել են հետևյալ ծախսերը.

հազ. դրամ

ԾԱԽՍԵՐ	391772.7
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	391395.7
Աշխատանքի վարձատրություն	170021.5
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	156625.0
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ	13396.5
Կրթաթոշակ	64620.0
Պայմանագրային ծառայություններ, վերապատրաստման ծախսեր	100189.8
Քննությունների ստուգման և գնահատման ծառայություններ	7530.0
Բանկային ծառայությունների ծախսեր	150.0
Էներգետիկ ծառայություններ	5713.1
Ջեռուցման ծառայություններ	4270.0
Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ	1699.6
Հեռախոսակապի ծառայություններ	840.2
Փոստային կապի ծառայություններ	50.0
Ինտերնետ ցանի մուտքի ապահովման ծառայություններ	576.0
Վերապատրաստվողների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	2494.8
Վերապատրաստվողների սննդի ծախսերի փոխհատուցում	10302.0
Դատական կարգադրիչների, դատախազների և դատավորների հատուկ ուսուցման ծառայություններ	6200.0
Կանոնավոր օդային փոխադրման /ավիատոմս/ ծառայություն	500.0
Տպագրական և հուշամեդալների պատրաստման աշխատանքներ	2000.0
Տեսաձայնագրման ծառայություններ	988.0
Աղբահեռացման ծառայություններ	254.4
Մասնագիտական ծառայություններ՝ այդ թվում ջեռուցման կայանների վերանորոգման և տեխնիկական սպասարկման, կաթսայի տեխնիկական անվտանգության և փորձաքննության ծառայություններ	521.0
Ուղևորափոխադրման ծառայություններ	560.0
Անկախ աուդիտորական ծառայություն	1000.0
Ծախսեր՝ ՅՈՒՆԻՍԵՖ ծրագրի շրջանակներում	22852.5
Գնումների համակարգման ծառայություններ	174.5
Քննիչների մասնագիտական պատրաստման և հատուկ ուսուցման ծառայություններ	25219.2
ՄԻՊ աշխատակազմի աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	320.0
Ծախսեր՝ UNHCR ծրագրի շրջանակներում	5974.5
Ներկայացուցչական ծախսեր	1740.0
Գործուղումներ	1000.0

Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	5785.7
Պահանջարկային ծառայություն	5785.7
Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	1600.0
Համակարգչային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	650.0
Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	950.0
Ընդհանուր բնույթի այլ ծախսեր	3121.9
Նյութեր	3150.7
Գրասենյակային նյութեր	452.3
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	788.4
Շինարարական նյութեր	1000.0
Համակարգչային նյութեր	10.0
Տրանսպորտային նյութեր	900.0
Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	377.0
1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	377.0
Գրասենյակային գույք	377.0
Հարկեր, այլ պարտադիր վճարներ և տույժեր	40166.2
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	391772.7

Ակադեմիայի 2017 թվականի բյուջեի կադարողական ցուցանիշները կամփոփվեն և կներկայացվեն փարվա ավարտից հետո:

VII. ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայում աշխատանքներ են իրականացվել նաև հետևյալ ուղղություններով՝

- 1) Ակադեմիան ՀՀ արդարադատության խորհրդի կողմից հերթական անգամ ընտրվել է որպես դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գրավոր քննության համար քննական հարցերի մշակման պատասխանատու կազմակերպություն.
- 2) իրավական հիմքի վրա է դրել համագործակցությունը օտարերկրյա համանման մի շարք կառույցների հետ, մասնավորապես՝ Ուկրաինայի դատախազության ազգային ակադեմիայի, Ղազախստանի Հանրապետության Գերագույն դատարանին առընթեր արդարադատության ակադեմիայի, Ղազախստանի Հանրապետության Գլխավոր դատախազությանն առընթեր իրավապահ մարմինների ակադեմիայի.
- 3) համագործակցության համաձայնագիր է ստորագրվել ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ.
- 4) իրականացվել են Ակադեմիայի համացանցային պաշտոնական կայքէջի լրամշակման և կատարելագործման շարունակական աշխատանքներ.
- 5) ուսուցման գործընթացը և աշխատանքային պայմանները բարելավելու նպատակով ձեռք են բերվել համակարգչային անհրաժեշտ սարքավորումներ՝ համակարգիչներ (այդ թվում՝ դյուրակիր), տպիչներ (այդ թվում՝ գունավոր), պրոյեկտորներ, ինչպես նաև համակարգչային սեղաններ՝ բազկաթոռներով.
- 6) ակտիվացվել են Ակադեմիայի գործունեության հրապարակայնության ապահովմանը և հասարակայնության հետ կապերի զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված աշխատանքները.
- 7) թողարկվել են Ակադեմիայի «Հուշամեդալ»-ներ և նախաձեռնվել են «Համագործակցության համար» մեդալների թողարկման աշխատանքները:
- 8) հետևողականորեն բարելավվել է Ակադեմիայի հյուրանոցային տնտեսությունը. կատարվել են սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ, հյուրանոցային բոլոր՝ տասնվեց համարներում տեղադրվել են հեռուստացույցներ,

համալիրի միջանցքներում տեղադրվել են տեսախցիկներ, իսկ հատակը պատվել է ուղեգորգերով.

- 9) Ակադեմիայի կադաստրային սահմանը նշագծող 500մ² մակերեսով մետաղական ցանկապատը, ինչպես նաև 150 գծային մետր երկարությամբ գազատար խողովակը ժանգոտումից պաշտպանելու նպատակով դրանք ամբողջությամբ մաքրվել են օտար նյութերից և ներկվել համապատասխան գույներով.
- 10) անվտանգության կանոններից ելնելով՝ վերամոնտաժվել են Ակադեմիայի մուտքի դարպասների գործարկման համար նախատեսված էլեկտրական հաղորդալարերը:
- 11) վերանորոգվել և համապատասխան գույներով ներկվել են Ակադեմիայի բակային տարածքում տեղադրված նստարաններն ու աղբարկղերը.
- 12) Ակադեմիայի բակային տարածքում գտնվող շուրջ 200մ² անմշակ տարածքը բարեկարգման աշխատանքների արդյունքում վերածվել է պուրակի, որի կենտրոնական մասում կառուցվել է ութանկյունաձև շատրվան՝ 8մ² մակերեսով և հինգ յուրատեսակ ցայտածողերով.
- 13) հայկական բնակլիմայական պայմաններին համապատասխանող հատուկ խոտաբույսերով կանաչապատվել է 150մ² տարածք, որում ներկառուցվել են պուրակի տարբեր մասերն իրար կապող 40 գծային մետր երկարությամբ բազալտե քայլուղիներ.
- 14) Ակադեմիայի հարավային մասում՝ ողջ ցանկապատի երկայնքով, 1 մետր լայնությամբ, կատարվել են աղբահանման և բարեկարգման աշխատանքներ՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով ապագա կանաչապատման համար.
- 15) լուծվել է Ակադեմիայի բնականոն աշխատանքի համար խիստ կարևոր նշանակություն ունեցող 75 կվտ հզորությամբ շուրջ 200 գծային մետր երկարությամբ պահուստային մալուխի հարցը, որը հաջողությամբ գործարկվել է գործող 50 կվտ հզորությամբ հնամաշ և կիսաքայքայված մալուխի փոխարեն.
- 16) Ակադեմիայի առաջին հարկում գտնվող ենթակայանում տեղադրվել է լրացուցիչ հսկիչ եռաֆազ հաշվիչ՝ ծախսված յուրաքանչյուր կվտ հոսանքի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով.
- 17) ընթացիկ և կապիտալ վերանորոգման է ենթարկվել շուրջ 1400մ² մակերեսով շենքի կտուրը, ինչի արդյունքում՝ նաև ամբողջովին հերմետիկ փակվել են

շուրջ 200 գծային մետր երկարությամբ հարթ մակերեսով թիթեղի և ծալվածք ունեցող թիթեղի հատման եզրերը.

- 18) վերջնականապես լուծվել է Ակադեմիայի բոլոր աշխատասենյակների օդափոխման-հովացման հարցը՝ տեղադրելով անհրաժեշտ հզորության ևս 13 օդորակիչներ.
- 19) անվտանգության առավել արդյունավետ ապահովման նպատակով տեղադրվել և գործարկվել են՝
 - ա) Ակադեմիայի վարչական շենքի առաջին հարկն ամբողջությամբ վերահսկող, ժամանակակից բոլոր պահանջներին համապատասխանող անվտանգության էլեկտրոնային ձայնաազդանշանային համակարգը,
 - բ) լրացուցիչ տասներկու տեսախցիկներ, այդ թվում՝ բոլոր լսարաններում՝ յուրաքանչյուրում մեկական.
- 20) իրականացվել է նաև Ակադեմիայում ավանդույթ դարձած ծառատունկ՝ վարչական շենքի բակային մասում գտնվող պուրակում տեղադրված «Տոյա» տեսակի մշտադալարների թիվը ավելացվել է ևս 12-ով և հասել 18-ի, նույնատեսակ 4 եղևնիներ տնկվել են ճակատային մասում գտնվող հողակտորներում, իսկ Փիրումյանների փողոցի հարևանությամբ գտնվող կանաչ տարածքները զարդարվել են թվով վեց արծաթափայլ եղևնիներով:

Ռեկտոր



Ս.Վ. Առաքեյան